



Nous embauchons! **We're hiring!**
Chauffeur/Porteur **Driver/Pallbearer**

(514) 331-0400 www.komitas.ca

Մի՛շտ գորավիզ Արցախին եւ Արցախահայութեան. ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի յայտարարութիւն

Արցախը կը բոլորէ իր վրայ պարտադրուած ատրպէյճանական շրջափակման հարիւրերորդ օրը: Պաքոյի իշխանութիւններու կողմէ Արցախը կենցաղային տարրական պայմաններէ զրկելու անմարդկային ու հայատեաց այս քայլը՝ կը միտի յաւելեալ ճնշումներով միանգամընդմիջտ յուսալքման մատնել Արցախի հանրապետութեան ժողովուրդը եւ հայաթափել Հայաստանի Արեւելից կողմանց դարպասը: «Խաղաղութեան դարաշրջան» է ճամարտակող Հայաստանի վարչախումբի պատրանքներուն՝ ալիւսեան բռնատիրութեան պատասխանը միշտ եղած են նմանօրինակ թշնամական կեցուածքներն ու օրըստօրէ աճող հաւանականութեամբ՝ նոր պատերազմի մը սպառնալիքները:

Հակառակ տիրող այս պայթիւնավտանգ լարուածութեան, թեւակոխելով շրջափակման 100-րդ օրը, Արցախն ու իր ժողովուրդը կրկին անգամ հաստատեցին, որ ինչպէս անցնող երեսնամեակին, այսօր էլ, դիմադրութեան ու պայքարի ոգին բարձր է ժողովուրդի խաւերուն մէջ, որոնք հաստատակամ են, որ իրենց ճակատագիրը կրնայ վճուուիլ միայն ազգերու ինքնորոշման իրաւունքի սկզբունքով:

Մենք, Գանատայի ՀՅԴ կառոյցը, կու գանք անգամ մը եւս մեր անսակարկ գօրակցութիւնը յայտնելու Արցախի հայութեան իրաւունքներուն, եւ անգամ մը եւս յիշեցնելու, որ անատայի քաղաքական եւ դիւանագիտական բեմերուն վրայ անդու պիտի պայքարինք ու գորակցինք Արցախի մեր հայրենակիցներուն եւ անոնց անկախութեան անտարելի իրաւունքին:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէ
 Մարտ 21, 2023

Գանատայի Արտաքին գործոց նախարար Մելանի Ժոլի կոչ ուղղեց Ատրպէյճանին բանալ Լաչինի միջանցքը



Գանատայի խորհրդարանի Մարտ 27-ի հերթական նիստի ընթացքին, Գանատայի արտաքին գործոց նախարար Մելանի Ժոլի անդրադարձաւ Արցախի շրջափակման: Այս մասին կը հաղորդէ Գանատայի Հայ Դատի Յանձնախումբը:

Նիստի ընթացքին ելոյթ ունեցաւ Ազատական կուսակցութեան անգամ ժան երկի եւ յայտնեց, թէ իր ընտրատարածքի, Աքարպորօ-էյճինգորթի մէջ ապրող հայ համայնքի քաղաքացիները խորապէս մտահոգ են Արցախի հակամարտութեան գծով լարուածութեան սրումին առնչութեամբ: Ան յիշեցուց, թէ արդէն աւելի քան հարիւր օրէ ի վեր Արցախի շրջափակումը կը շարունակուի եւ առկայ է մարդասիրական խորացող տագնապ մը, իսկ Արցախի ժողովուրդը մտավախութիւն ունի, թէ կացութիւնը շուտով կրնայ վերստին սրիլ: Ան հարց տուաւ, թէ Գանատայի արտաքին գործոց նախարարը կրնա՞յ պարզաբանել, թէ Գանատայի կառավարութիւնը ի՞նչ քայլեր առած է այս հարցին ուղղութեամբ:

Նիստին ներկայ Արտաքին գործոց նախարար Մելանի Ժոլի պատասխանելով հարցին յայտնեց, թէ Գանատան կը շարունակէ կոչ ուղղել Ատրպէյճանի իշխանութիւններուն Լաչինի միջանցքը բանալու եւ բոլոր հայ ռազմագերիները ազատ արձակելու: Ան շեշտեց, որ պէտք է առաջը առնուի մարդասիրական տագնապի վիճակի յաւելեալ վատթարացման: Ան միաժամանակ յայտնեց, որ Գանատան իր գօրակցութիւնը կը յայտնէ Հայաստանի սահմաններուն վրայ Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութեան:

ԳՈՑԹ

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն կը գուժէ մահը Գանատայի Հայ Դատի յանձնախումբի յանձնառու գործիչ, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի նախկին անդամ, Armenian National Federation-ի երկարամեայ ատենապետ, Հայ Դատի պայքարի նուիրեալ? ընկեր Արթի Յակոբեանի:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէ

ՄԵՐ ԻՐԱՒՈՒՆՔԸ - ՄԵՐ ՁԵՌՔՈՎ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

108 - ԱՄԵԱԿ

Երկուշաբթի, 24 Ապրիլ 2023

ԲՈԼՈՐՍ ՄԻԱՍԻՆ ՕԹԹԱՈՒԱ



YES YOU CAN

Introducing, The All-New HR-V

CONTACT US FOR MORE INFORMATION

KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN

HONDA GABRIEL | **HONDA**

7000, boul. Henri-Bourassa Est
 Montréal-Nord, (Québec) H1G 6C4
 ☎ : 514 321-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միֆան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

★ IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Սարդարապատի Յուշահամալիրին Մէջ Ծորջ 50 Նորագիրներ Համալրեցին ՀՅԴ Ծարքերը

ՀՅԴ Հայաստանի երազոյն մարմինի Հանրային կապերու գրասենեակը կը հաղորդէ, որ 2 ապրիլին ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինին նախաձեռնութեամբ Սարդարապատի յուշահամալիրին մէջ տեղի ունեցած է երդման հանդիսաւոր արարողութիւն, որուն ընթացքին Հայաստանի Հանրապետութեան տարբեր մարզերէն շուրջ 50 նորագիրներ համալրած են ՀՅ Դաշնակցութեան շարքերը:

Հանդիսաւոր արարողութեան ժամանակ ներկայներուն ուղղուած խօսքով Հանրէս եկած են ընկերաբան, իրանազէտ Սարգիս Մկրտչեանը եւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ, Հայաստանի Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սողաթէլեանը:

Ընդգծելով մեր օրերուն հայրենիքի ճակատագրի համար պատասխանատուութիւն ստանձնելու կարեւորութիւնը, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սողաթէլեան իր խօսքին մէջ շեշտած է, որ Դաշնակցութիւնը կը մերժէ օրուան իշխանութեան առաջարկած «փրկութիւնը յանձնուելու մէջ է» բանաձեւը՝ ատիկա նկատելով ինքնատէնջացման ճամբայ: «Մենք մեր ժողովուրդին կ'առաջարկենք պայքար յանուն փրկութեան եւ պատրաստ ենք ըլլալու այդ պայքարի եւ գինուորը, եւ առաջամարտիկը: Դիմադրութիւն, միանակամարտութիւն, պայքար. սա է Արցախը հայկական պահելու, Հայաստանը թշնամիի ոտնձգութիւններէն պաշտպանելու միակ ճամբան», եզրափակած է իր խօսքը Սողաթէլեանը:

Միջոցառումն աւարտած է Սարդարապատի յուշահամալիրին մէջ գտնուող Արամ Մանուկեանին նուիրուած յուշաքարին մօտ տեղի ունեցած երդման խորհրդանշական արարողութեամբ:

ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնեանը թքած է իրեն դաւաճան անուանած հայրենադարձ քաղաքացիի դէմքին

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնեանը Երեւանի կեդրոնին մէջ՝ Կասկադի մօտ թքած է իրեն դաւաճան անուանած հայրենադարձ քաղաքացիի դէմքին: Այս մասին ֆեյսպուքեան հարթակի վրայ ապրիլ 2-ին տեղեկացուց Ազգային ժողովի «Պատիւ ունեմ» խմբակցութեան պատգամաւոր Հայկ Մամիջանեանը, որ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Ասպրամ Կրպէյեանի հետ ոստիկանութեան բաժնի մօտ գացած էր միջադէպէն ետք ոստիկանութիւն տարուած քաղաքացիին իրաւունքները պաշտպանելու համար:

«Կասկադում հայրենադարձ Կարէն Մկրտչեանը՝ տեսնելով ԱԺ նախագահին նրա ուղղութեամբ բացականչել է այն, ինչ գոռում են բոլորը՝ դաւաճան: Դրանից յետոյ Ալեն Սիմոնեանը իր թիկնապահներին կարգադրել է գալ եւ բռնել Կարէնի ձեռքերը, թիկնապահները կատարել են Ալենի հրահանգը, որից յետոյ անձամբ մօտեցել է Ալեն Սիմոնեանը, պատասխան հայտարարելով հնչեցրել Կարէնի հասցէին, ընդ որում շատ կեղտոտ հայտարարել էր Կարէնից յետոյ թքել է քաղաքացու աչքին: Սա նա արել է՝ օգտուելով առիթից, որ քաղաքացուն պահում էր նրա բազմաթիւ թիկնապահները: Դրանից յետոյ թիկնապահները պահել են Կարէնին՝ մինչեւ ժամանի ոստիկանութիւնը: Կարէնը բերուել է ոստիկանութիւն, որտեղ նրա անձը ճշդելուց յետոյ բաց են թողել նրան», - պատմեց Մամիջանեանը:

Մամիջանեանի խօսքով՝ այս մէկը կը կատարուի, որպէսզի այլեւս իշխանութեան ներկայացուցիչներուն հասցէին նման բռնուր ըսողներ չըլլան: «Թէ Կարէնը, թէ այլ քաղաքացիները նման դէպքերում գտնուելու են մեր պաշտպանութեան ներքոյ: Իրենք դաւաճան են եւ դա լսելու են անդադար», - ըսաւ Մամիջանեանը:

Պատգամաւոր Ասպրամ Կրպէյեանը, որը նոյնպէս կը գտնուէր ոստիկանութեան շէնքի մօտ, հաստատեց, որ փաստացիօրէն քաղաքացիին զրկած են իր ազատ խօսքի իրաւունքէն:

Իշխանութիւնը խաղաղութեան կեղծ օրակարգով երկիրը տանում է նոր զիջումների. ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի յայտարարութիւնը

Հայաստանն Արցախին կապող երթուղու փոփոխութեամբ պայմանաւորուած, վերջին օրերին, ադրբեջանական զինուած ուժերը Տեղ գիւղի ուղղութեամբ անարգել մուտք են գործել ՀՀ ինքնիշխան տարածք եւ գրաւել կարեւոր ռազմավարական գերիշխող դիրքեր: Այս ամէնը՝ ՀՀ ներկայ իշխանութեան անգործութեան կամ էլ լուռ ու գաղտնի համաձայնութեան հետեւանք է:

ՀՀ վարչապետի պաշտօնը զբաղեցնող անձը նախ յայտարարեց, թէ վերադարձաւ Երեւանը կապուած են ադրբեջանական կողմի հետ նախկինում ձեռք բերուած պայմանաւորութեան խախտման համաձայն Լաչինի միջանցքին կապող երթուղին ապրիլի 1-ից Կոտնիճորով անցնելու հետ եւ հայկական դիրքերի որեւէ փոփոխութիւն տեղի չի ունեցել:

Սակայն հանրային ահազանգից յետոյ, ՀՀ ԱԱԾ-ն ստիպուած «պարզաբանում» տարածեց, ըստ էութեան, ընդունելով, որ որեւէ տեղ չարձանագրուած նախկինում եղած պայմանաւորութեան խախտումով ադրբեջանական կողմը 5 ուղղութիւններով սահմանից 100-ից 300 մետր աւելի առաջ է տեղակայուել:

Առկա փաստերը, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորների Սիւնիք կատարած այցի եւ տեղում առանձին հանդիպումների արդիւնքում ստացուած տուեալները ստիպում են արձանագրել, որ.

2020 թուականի նոյեմբերի 9-ից յետոյ, Ադրբեջանը իրարայարող յարձակումներով ու առաջխաղացումներով, գրաւած պահույնով ՀՀ ինքնիշխան տարածքների հսկայական հատուածներ, շարունակում է ամրակայման աշխատանքների իրականացումը, ինչի հետեւանքով տեղի է ունենում փաստացի սողացող անեքսիա:

Նման ագրեսիվութեանն ի պատասխան, ՀՀ իշխանութիւնները յղում անելով ինչ որ բանաւոր պայմանաւորութեան խախտման, ինքնակամ զիջում են ՀՀ ինքնիշխան տարածքներ՝ ստեղծելով լրջագոյն անվտանգային սպառնալիքներ:

Մինչեւ հիմա պարզաբանուած չէ, թէ ի՞նչ պայմանաւորութեան խախտում են նախկինում ձեռք բերուել, ի՞նչ փաստաթղթով են դրանք ամրագրուել, ինչի՞ հիման վրայ է ՀՀ սահմանի առանձին հատուածները համարուում Ադրբեջանի հետ արդէն ճշգրտուած:

Թշնամին, փաստօրէն կամայականօրէն կատարում է սահմանազատում ու սահմանազծում՝ ըստ իր ցանկութեան, ինչը վտանգաւոր նախադրեալներ է ստեղծում գալիք օրեւէ բանակցութիւնների համար:

Անընդունելի եւ դատապարտելի է այն փաստը, որ թշնամու սանձարձակ ու անարգել գործողութիւններին հակազդելու փոխարէն, ՀՀ իշխանութիւնը շարունակում է անգործութիւն դրսեւորել եւ հանրութեանը կերակրել անատամ եւ մոլորցնող յայտարարութիւններով:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինը մէկ անգամ եւս հաստատում է, որ ՀՀ իշխանութիւնը, վաղուց հրաժարուել է մեր երկրի անվտանգութեան նկատմամբ իր առաջնային պարտաւորութիւնից եւ խաղաղութեան կեղծ օրակարգով երկիրը տանում է նոր պատերազմի եւ զիջումների:

Այս պայմաններում, անհրաժեշտ ենք համարում ՀՀ պետական եւ ազգային շահերով առաջնորդուող բոլոր առողջ ուժերի եւ հանրութեան համախմբման անհրաժեշտութիւնը, թոյլ չտալու համար, որ թշնամու կամակատար այս իշխանութիւնը շարունակի իր ազգակործան ընթացքը:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ
03 04 2023

Ghadir Meat & Restaurant
T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

Sutton
Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M9
Annie Varbedian
Sales Representative
Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotmial.com
www.suttongroupadmiral.com

Crown Pastries
حلويات التاج
Fine Middle Eastern Pastries

ARZ fine foods
The Essence of Mediterranean Gourmet Since 1989
Website: arzfinefoods.com
Email: info@arzfinefoods.com
Scarborough Location
1909 Lawrence Ave E,
Scarborough, ON M1R 2Y6
(416) 755-9084
Mississauga Location
720 Bristol Rd W,
Mississauga, ON L5R 4A5
(905) 502-9292

Haroot Sepan
T +1 (416) 900 8626
F +1 (416) 900 8659
C +1 (416) 939 1895
haroot@araratfoods.com
www.araratfoods.com
Ararat Trading (2002) Corp
5820 Kennedy Rd Mississauga,
ON L4Z 2C3 CANADA

hearing aid source
Andre Ayvazyan HIS B.A.S
andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)
Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Gary Chahinian President, Broker of Record
416-258-8892
Gabriel Chahinian Sales Representative
647-580-5818
The Diamond Realty

I.D.A.
Part of the **Novartis** family of pharmacies.
Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈՒՊՈՒՆ
Middle Eastern Pizza
Lahmajoun
ARSEN DABBAGHIAN
25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

«ՀՕՄ-ը ճիգ կը թափէ, որ արցախցին կառչած մնայ իր հողին». Հարցազրոյց ՀՕՄ-ի Գանատայի Երջանային վարչութեան ատենապետուհի Լուսին Ժամկոչեան Փալանճեանի հետ

ՀՕՄ-ը, ինչպէս միշտ, Սուրիոյ աղէտալի երկրաշարժէն տուժած մեր ժողովուրդին առաջին ձեռք մեկնողը եղաւ. կազմակերպեց դրամահաւաք, գանձազան ծրագիրներուն հասոյթները անվարան տրամադրեց անպատան մնացած մեր ժողովուրդի գաւակներուն եւ տակաւին, յետերկրաշարժի այս օրերուն, կը շարունակէ աշակցիլ, որպէսզի սուրիահայրերը կարենայ վերադառնալ իր բնականոց կեանքին: Դրամահաւաքի նշեալ ծրագիրներուն մաս կազմեց նաեւ ՀՕՄ-ի Գանատայի Երջանային վարչութեան հովանաւորութեամբ եւ Սուրիահայրութեան Օժանդակութեան Գանատայի մարմնի ենթալանձնախումբի կազմակերպութեամբ, Շարքթ, 25 Մարտ 2023-ին, Թորոնթոյի մէջ տեղի ունեցած դրամահաւաքի երեկոյն:

Այս առթիւ եւ ՀՕՄ-ի այլազան ծրագիրներուն մասին տեղեկանալու համար «Հորիզոն» սոյն հարցազրոյցը ունեցաւ ՀՕՄ-ի Գանատայի Երջանային վարչութեան ատենապետուհի Լուսին Փալանճեանի հետ.

Հ.Օ.Մ. ՀՕՄ-ը Սուրիահայ Օգնութեան Խաչին միջոցաւ ինչպէ՞ս օգնութեան հասաւ Սուրիոյ եւ յատկապէս Հալէպի մեր ժողովուրդին՝ երկրաշարժի առաջին օրերուն:

Լ.Փ.- Նախ ըսեմ, որ երկրաշարժէն առաջ Սուրիոյ պատերազմին պատճառով, ՀՕՄ-ը կեդրոնացուցած էր իր ուշադրութիւնը սուրիահայութեան օժանդակութեան աշխատանքներուն վրայ: ՀՕՄ-ը նիւթապէս կ'օժանդակէր «Սուրիահայ վարժարաններու օժանդակութեան ֆոնտ», «Տաք ճաշ», եւ «Տաքուկ բնակարան» ծրագիրներուն: Մինչեւ անցեալ տարի ՀՕՄ-ի համահայկական ընտանիքի ջանքերով, պատկառելի գումար մը տրամադրուած է Սուրիահայութեան Օժանդակութեան հիմնադրամին: Անշուշտ մեր շրջանն ալ իր յատկացումները կատարած է այս ուղղութեամբ: Չմոռնամ նշելու նաեւ, որ ՀՕՄ-ի Գանատայի ընտանիքը տարիներէ ի վեր ստանձնած է «Տաքուկ զգեստ» ծրագիրը, որ դպրոցական երեխաներու համար բաճկոններ կը տրամադրէ:

Հետեւաբար, Սուրիոյ երկրաշարժէն անմիջապէս ետք, անսպառով ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ստեղծած Երկրաշարժէն Տուժածներու Հիմնադրամի կոչին, անմիջապէս հարկ եղած քայլերը առինք եւ օգնութեան ձեռք մեկնեցինք ծանր երկրաշարժէն տուժած մեր սուրիահայ քոյրերուն եւ եղբայրներուն: Երկրաշարժի երկրորդ օրը՝ 7 Փետրուարին, դրամահաւաքի կոչով մը հանդէս եկանք, մեր մասնաճիւղերը զօրակոչի ենթարկեցինք եւ մեր բոլոր հայրենակիցներէն օժանդակութիւն խնդրեցինք: Քաջ գիտնալով որ մեր հայրենակիցներն ու յատկապէս մեր բոլոր մասնաճիւղերը օգնութեան պիտի փութան, հանգանակութեան յայտարարութեան յաջորդ օրը՝ 8 Փետրուարին, որոշեցինք մեր առաջին օժանդակութիւնը ուղարկել, ուստի, 25,000 տոլար ուղարկեցինք Սուրիոյ մեր միաւորին:

ՀՕՄ-ի Գանատայի շրջանի բոլոր մասնաճիւղերը անխտիր նոր նախաձեռնութիւններ կազմակերպեցին եւ կամ նախօրօք կազմակերպուած եւ յայտարարուած ձեռնարկներուն շահը որոշեցին (երբեմն նոյնիսկ ամբողջութեամբ) նուիրել սուրիահայութեան: ՀՕՄ-ը հիմնադրուած էր որպէսզի սուրիահայութեան համար անհրաժեշտ ծրագրեր կազմակերպուին: ՀՕՄ-ը հիմնադրուած էր որպէսզի սուրիահայութեան համար անհրաժեշտ ծրագրեր կազմակերպուին: ՀՕՄ-ը հիմնադրուած էր որպէսզի սուրիահայութեան համար անհրաժեշտ ծրագրեր կազմակերպուին: ՀՕՄ-ը հիմնադրուած էր որպէսզի սուրիահայութեան համար անհրաժեշտ ծրագրեր կազմակերպուին:

ՀՕՄ-էն անկախ, մեր կարկին տակ գործող գրեթէ բոլոր միութիւնները անխտիր իրենց մասնակցութիւնը բերին սկսուած դրամահաւաքին: Այս ընթացքին սկսուած հանգանակութեան աւելի մեծ ծաւալ տալու համար եւ գործը համադրուած ձեւով կազմակերպելու նպատակաւ, 14 Փետրուարին «Հորիզոն» շաբաթաթերթով եւ մեր ընկերային հարթակներով ու նամակներով հրապարակեցինք մեր երկրորդ կոչը, ուղղուած մեր ուղեկից միութիւններուն, կազմակերպութիւններուն եւ հայրենակիցներուն, որուն մէջ նշեցինք հետեւեալը. «ՀՕՄ-ի Գանատայի շրջանը, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի Սուրիահայութեան Օժանդակութեան յանձնախումբին եւ մեր ուղեկից կազմակերպութիւններուն հետ համատեղուած ճիգերով, իր աջակցութիւնը պիտի բերէ երկրաշարժէն տուժած սուրիահայ գաղութի գաւակներուն»:

Սուրիահայութեան Օժանդակութեան Գանատայի մարմնի յանձնախումբի ժողովները առցանց տեղի կ'ունենան, որովհետեւ յանձնախումբի անդամները կ'ապրին Վանդուզըր, Թորոնթօ, Գեմպրի, Մոնթրէալ, Օթթաւա եւ Լաւալ: Մեր յանձնախումբի անդամները կը ներկայացնեն մեր տեղական մարմինները եւ միութիւնները՝ ՀՕՄ-ը, ՀՅԴ Կոմիտէները, Համագործակցութիւնը, Երիտասարդացը, Արմէն Գարօ Ուսանողական միութիւնը, ՀՄԸՄ-ը, Պատանեկանի եւ «Հայ Հորիզոն» հեռուստատեսային տնօրէնութիւնը:

Այսօր յանձնախումբին եւ վարչութեան անունով խորին շնորհակալութիւն կը յայտնենք ոչ միայն մեր անդամներուն, համակիրներուն, կազմակերպութիւններուն, այլեւ համայն գանատահայութեան, որովհետեւ միասնական ջանքերով մասնակցեցան այս դրամահաւաքին եւ տակաւին կը շարունակեն մասնակցիլ: Շնորհիւ մեր ժողովուրդին, ՀՕՄ-ի Գանատայի շրջանը

կրցաւ իր երկրորդ յատկացումը կատարել սուրիահայութեան, 50,000 ամ. տոլար նուիրաբերելով: Տակաւին ունինք խոստումներ անհատներէ եւ միութիւններէ: Դրամահաւաքի թիրախը 100,000-150,000 ամ. տոլար է: Տակաւին օժանդակութեան գործընթացը կանգ չէ առած: Բոլորս ալ յոյս ունինք, որ նոր նուիրատուներ երեւան պիտի գան, եւ մենք պիտի հասնինք մեր նպատակին: Հետեւաբար, անոնք որոնք կը փափաքին նուիրատուութիւն կատարել կրնան ե-փոխանցում մը ընել՝ ars-canada@bellnet.ca կամ վճարագիր մը գրել ARS Foundation-ին, նշելով տակը Aid to Syria բառերը:

Լիայոյս ենք, որ իւրաքանչիւր գանատահայ իր մասնակցութիւնը բերելով պիտի նպաստէ մարդասիրական այս մեծ գործին:

Հ.Օ.Մ. ՀՕՄ-ի Երջանային վարչութեան հովանաւորութեամբ եւ կազմակերպութեամբ Սուրիահայութեան Օժանդակութեան Գանատայի մարմնի ենթալանձնախումբի տեղի ունեցաւ դրամահաւաքի երեկոյն Թորոնթոյի մէջ, որ մաս կը կազմէր ՀՕՄ-ի դրամահաւաքի ծրագիրներուն. նշեալ դրամահաւաքներով մեր ծրագիրները պիտի մշակուին՝ յետերկրաշարժի այս օրերուն, որպէսզի Սուրիոյ մեր ժողովուրդը կարենայ վերադառնալ իր բնականոց կեանքին:

Լ.Փ.- Այո, տեղի ունեցաւ նշուած երեկոյն, բայց իրականութեան մէջ դրամահաւաքի այլ յատուկ երեկոյ մը պիտի չկազմակերպէ ՀՕՄ-ը, այլ փակման տարբեր միջոցառում մը տեղի պիտի ունենայ:

Այս հանգանակային արշաւին առթիւ պատրաստութեան ընթացքի մէջ է յատուկ վաւերագրական ժապաւէն մը Մոնթրէալի եւ Հալէպի «Հորիզոն» անձնակազմի պատրաստութեամբ, յետ երկրաշարժի սուրիահայութեան իրավիճակին մասին: Յիշեալ ժապաւէնը պիտի ցուցադրուի «Հայ Հորիզոն»-էն 30 Ապրիլին Քեպէպի մէջ եւ «Նոր Հայ Հորիզոն»-էն 6 Մայիսին, Օնթարիոյ մէջ: Այս ժապաւէնը կարելի է տեսնել նաեւ «Հայ Հորիզոն» դիմատետրի էջէն 29 Ապրիլին: Տեղին է նշել, որ ժապաւէնին մէջ պիտի ներկայացուին նուիրատուներուն անուններն ու գումարները:

Գալով յետերկրաշարժի իրավիճակին, վստահ ենք, որ նոր ծրագիրներ պիտի մշակուին նպաստելու սուրիահայութեան առողջական, կրթական, սնունդի, բնակարանային եւ ազգային կառոյցները ամուր պահելու ուղղութեամբ: Իմացած ենք, որ տարիներէ ի վեր «Պնակ մը տաք ճաշ» ծրագրէն օգտուողներուն թիւը բարձրացած է այսօր, հասնելով աւելի քան 500 հայրենակիցի: Տեղեկ ենք նաեւ, որ բնակարաններու մասնակի կամ ամբողջական նորոգման ցանկազուտները տեղի կ'ունենան: Ներկայիս Սուրիահայ Օգնութեան Խաչը կ'օգտագործէ իրեն հասած նուիրատուութիւնները սուրիահայութեան զանազան պէտքերը հոգալու համար: Այս օգնութեան մաս կազմեց նաեւ 500 կարօտեալ անհատներու 200,000 սուրիական ոսկի յատկացումը: ՍՕՍ-ը այս աղէտի օրերուն ժողովուրդին տրամադրեց անհրաժեշտ ուսուցիչ, փոքրերու կաթ, հագուստեղէն, վերմակներ, դեղորայք եւ ծածկոցներ:

ՍՕՍ-ի Երջանային վարչութեան առաջնահերթ նպատակներէն մէկը եղաւ պատկան մարմիններու հետ ժողովուրդին տրուելու ընկեր: Ընկերուհիները նեցուկ եղան բոլորին, նամանաւանդ անտէր չձգեցին ծերերը, որոնք յատուկ խնամքի եւ ուշադրութեան կարիքը ունէին:

Այսօր անհրաժեշտ նկատուած օգնութեան ծրագիրները կրնան մնայուն ծրագիրներու վերածուիլ, եթէ սուրիահայութեան հիմնադրամը իր կարգին շարունակական ձեւով մեծ օժանդակութիւն ստանայ դուրսէն: ՀՕՄ-ի բարեսիրական գործը կը կայանայ ժողովուրդէն եկած ժողովուրդին վերադարձնելուն մէջ: Ի հարկէ, ՀՕՄ-ի նշանաբանին բոլորը ծանօթ են՝ «Ժողովուրդիս համար, ժողովուրդիս հետ», այս է ՀՕՄ-ին սուրբ առաքելութիւնը: Կասկածէ վեր է, որ մեր շրջանը, ինչպէս միշտ, այս անգամ ալ պիտի նպաստէ նոր ծրագիրներուն, երբ անոնք մշակուին եւ մեզի փոխանցուին:

Հ.Օ.Մ. ՀՕՄ-ը նաեւ մեծագոյն ներդրում է հայրենակիցին. այսօրուան դրութեամբ ՀՕՄ-ը ի՞նչ ծրագիր-



ներ կ'իրականացնէ Արցախի եւ Հայաստանի մէջ եւ:

Լ.Փ.- Արցախի 44-օրեայ պատերազմէն ետք մեր գործունէութիւնը բաւական ազդուեցաւ: Այդ օրերուն ունէինք միջոց մանկապարտէզներ, այսօր ունինք միայն չորս՝ Ստեփանակերտ, Աշան, Ակնաբերդ եւ Խնձրիստան:

Դժբախտութիւնը այն է, որ 12 Դեկտեմբերէն ի վեր Արցախի շրջափակումը ազդեց նաեւ բաւական գործուն մեր չորս մանկապարտէզներուն վրայ: Անոնք երկար ատեն փակուեցան կազատար խողովակներու խափանման պատճառով: Ներկայիս մանկապարտէզները բնականոց կերպով կը գործեն: ՀՕՄ-ի ծրագիրներէն մէկն է նաեւ «Արեւային Արցախ»-ի ծրագիրը, որուն արդիւնքով արդէն 100-էն աւելի բնակարաններ Արեւային ջրատաքացուցիչներ ունեցան Մարտունիի եւ Մարտակերտի շրջաններէն ներս: Այս ծրագիրը կը միտի կարիքաւոր ընտանիքներուն կամ վիրաւոր զինուորներու ընտանիքներուն նպաստել:

ՀՕՄ-ը ճիգ կը թափէ, որ արցախցին մնայ իր հողին վրայ: Նոյնիսկ Հայաստան գաղթած կամ տեղահանուած արցախցիներուն նիւթական օժանդակութիւն կը տրամադրէ: ՀՕՄ-ը կ'օժանդակէ նաեւ «Զինուորի տուն» վերականգնողական ծրագիրին, որպէսզի հայ զինուորը որակեալ բուժում ստանայ: ՀՕՄ-ի մեր շրջանը, ըլլա՛յ Արցախի, ըլլա՛յ Հայաստանի կամ Զաւախքի հետ կապուած բոլոր ծրագիրներուն իր մասնակցութիւնը կը բերէ, տարեկան կանոնաւոր յատկացումներ կատարելով, նոյնիսկ երբեմն, ի պահանջեալ հարկին, դրամահաւաք կազմակերպելով: Աւելցնեմ նաեւ, որ տակաւին երկու ամիս առաջ Զաւախքի երիտասարդական կեդրոններուն օժանդակելու նպատակաւ դրամահաւաք մը կազմակերպելու լծուած էինք, սակայն որոշեցինք առժամաբար կասեցնել գայն, հասնելու համար սուրիահայութեան տաղանային:

Խօսելով մեր այլ ծրագիրներուն մասին հարկ է նշել հետեւեալները.

ՀՕՄ-ի «Մօր ու Մանկան» Առողջութեան Կեդրոնը եւ Մոնթրէալը, որ այսօր կը սպասարկէ Ախուրեանի եւ շրջակայ 6-7 գիւղերու 40,000 բնակիչներուն: Շնորհիւ ՀՕՄ-ին այս կեդրոնը կը տրամադրէ բարձրորակ ծառայութիւններ:

ՀՕՄ-ը ունի նաեւ «Որբերու Ուսման» ծրագիրը, որ հաստատուած է 2008-ին: Ծրագիրը կը հոգայ 18 տարիքը լրացուցած եւ երկրորդական վարժարան աւարտած որբերու համալսարանական ուսման ծախսերուն մէջ բաժինը: Հոս ալ Գանատան ունի նկատուելի թիւով խնամակալներ:

Կայ նաեւ «Լաւազոյն Ուսանող» ծրագիրը Հայաստանի, Արցախի եւ Զաւախքի մէջ: Ծրագրին նպատակն է նիւթական պարգեւներ յատկացնել Հայաստանի, Արցախի, եւ Զաւախքի մէջ փայլուն ուսանողներու: Հարկաւ այս ծրագրին ալ մեր նպաստը կը բերենք:

Վերջապէս, ունինք նաեւ «Ամանոր» ծրագիրը, որմէ կ'օգտուին ոչ միայն Հայաստանի, Արցախի եւ Զաւախքի հայութիւնը, այլեւ Լիբանանի, Սուրիոյ, Պուկարիոյ եւ Հարաւային Ամերիկայի կարիքաւոր երեխաները:

Ամփոփելով ըսեմ, որ շրջանա լրիւ կերպով կը կատարէ Կեդրոնական վարչութեան ծրագիրներուն օժանդակելու իր պարտականութիւնը արցախահայութեան նկատմամբ, որբայնամ եւ ուսանողական ծրագիրներուն, զոհուած հերոսներու գաւակներու ծրագրին եւ մանկապարտէզներուն:

Հ.Օ.Մ. Գալով Գանատայի տարածքին, ի՞նչ գոր-



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ձ. ՏԱՐԻ, Թիս 5, Ապրիլ 2023



ԹԱՓՈՒՐ ԳԵՐԵՉՄԱՆ...
ՍԿԻՋԲ ԼՈՐ ԿԵԱՆՔԻ

Գերեզմանը թափուր էր...: Առաջին ակնատեսները իդարեր կանայք եղան: Առաջին ցնցող լուրը՝ «Մի վախճաք», «Ան այստեղ չէ, այլ յարութիւն առաւ» հրեշտակներու երկնահունչ ձայնով լսողները նոյն կանայք եղան: Թափուր Գերեզմանէն ճառագայթող խորհուրդը Նոր Կեանքի մը մասին էր՝ Յարութեամբ նորոգում:

Քրիստոսի յարութեան ղեկավար խորհուրդներուն խորհուրդն է:

Թափուր Գերեզմանէն մահը նուաճող, մեղքը տապալող յարուցեալ Քրիստոսը մեզի Նոր Կեանք պարգեւեց, Նոր Կեանք՝ աստուածային անմահական զօրութեամբ լեցուն:

Այո, Թափուր Գերեզմանը փաստ մըն էր... Թափուր գերեզմանը... նոր սկիզբ դրաւ մարդու կեանքին մէջ: Քրիստոսի յարութեամբ մարդը նոր արարած դարձաւ:

Քրիստոս ուրախութեամբ յայտարարեց Իր աշակերտներուն՝ քաջակերելով զիրենք. «Ես յաղթեցի աշխարհին», այն աշխարհին, որ Աստուծմէ հեռացած մարդուն կողմէ շինուած էր՝ մեղքով լեցուն, որուն կը պատկանէր մարդը:

Մահը յաղթուած էր այլեւ... Մահուան սարսափը փարատուած: Անմահութեան հաւատքն է, որ թեւ-թոյնք առաւ: «Միայն հաւատան», պատգամեց Քրիստոս. եւ այս է հիմնական իմաստը յարութեան: Այդ հաւատքով էր, որ յուսաբեկուած առաքեալները արհացան:

Այդ հաւատքով էր, որ առաքեալները քարոզեցին հաւատքը յարութեան:

Այդ հաւատքով էր, որ մեր հայրերը իրենց կեանքը ապրեցան:

Այդ հաւատքով էր, որ մեր ժողովուրդը դարձաւ առաջին ազգը, քրիստոնէութիւնը իբրեւ պետական կրօն ընդունող:

Այդ հաւատքով էր, որ ապրեցան մեր արհացեալ նահատակները եւ մահը կեանքի վերածեցին:

Եկէք մենք եւս այսօր այդ հաւատքով ապրինք եւ յոյսով գործենք, միշտ վերանորոգելով մեր ուխտը, հաղորդուելու Քրիստոսի հետ, սրբուելու մեղքերէն, մեռնելու Քրիստոսի հետ եւ յարութիւն առնելու Քրիստոսով:

Ահաասիկ պատգամը Թափուր Գերեզմանի...սկիզբը ՆՈՐ ԿԵԱՆՔԻ:
Պատգամը ՅԱՐՈՒՅԵԱԼ ՔՐԻՍՏՈՍԻ:

Ձեզի Մեզի Մեծ Աւետիս
Քրիստոս Յարեալ Ի Մեռելոց

Բարգէն Արքեպիսկոպոս

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տարուան ամենէն Սուրբ Շաբաթը կը կոչուի Աագ Շաբաթ: Եկեղեցական ճոխ եւ հարուստ արարողութիւններու շրջան մըն է, որ կ'ընդգրկէ Ղազարոսի յարութենէն մինչեւ Սուրբ Չատիկ:

Այս ժամանակաշրջանին մէջ է, որ Հայ Եկեղեցին Սուրբ Յարութեան շաբաթապահքի ընթացքին կը յիշատակէ Ղազարոսի յարութիւնը, Յիսուսի յաղթական մուտքը Երուսաղէմ, որ ծանօթ է նաեւ Ծաղկազարդ անունով: Ծաղկազարդի տօնին երեկոյեան, կը կատարուի Դոնբացեղքի արարողութիւնը, որ վերջին դատաստանի օրինակն է:

Աագ Երկուշաբթի, գիշերային ժամերգութեան Օրհնութեան շարականը կը պատմէ ու կը գովերգէ աստուծային ստեղծագործութիւնը, ուր «**Հօր փառքին աներեւոյթ պատկերը, իր մարդասէր պատկերով ստեղծեց մարդկային բնութիւնը**» եւ դրախտային կեանքը պարգեւեց անոր: Բայց աստուածային անբովանդակելի սիրոյն դիմաց «**նախահօր անկումը**», պատճառ դարձաւ անոր սնկման եւ դրախտէն արտաքսման:

Աագ Երեքշաբթի օրուան խորհուրդը քաղուած է Քրիստոսի պատմած տասը կոյսերուն առակէն (Մտ 25:1-13): «**Արթուն մնացէք, որովհետեւ չէք գիտեր Մարդու Որդիին գալուն ո՞չ օրը եւ ո՞չ ալ ժամը**» (Մտ 25:13), Քրիստոսի այս կոչը բոլոր հաւատացեալները արթնութեան ու պատրաստութեան կը հրաւիրէ, որ աղօթքով ու հոգեւոր արթնութեամբ պատրաստ ըլլալ Տիրոջ գալուստին:

Աագ Չորեքշաբթի, գիշերային ժամերգութեան Օրհնութեան շարականին ընդմէջէն կը յայտնուի Քրիստոսի մատնութեան խորհուրդը. «**Այսօր Յուդայի արծաթսիրութեան գաղտնի խորհուրդը յայտնուեցաւ**», «**աշակերտ Յուդան, վարդապետին սէրը առելութեամբ փոխարինեց, զայն քահանաներուն մատնելով երեսուն արծաթի**»: Աստուածային պատկերով ստեղծուած մարդը կը պատրաստուի մատնել իրեն համար աշխարհի եկած Աստուածորդին:

Աագ Հինգշաբթի կը կատարուի Ապաշխարողնրու կարգը, որուն կը յաջորդէ Սուրբ Հաղորդութեան Պատարագը, որ Վերջին Ընթրիքի յիշատակութիւնն է: Սուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքին կը կարթացուի Սուրբ Բարսեղ Հայրապետին Աղօթքը, ուր Հայրապետը Աստուծոյ կատարած ստեղծագործութեան գովը կը ներբողէ: «**Ինքնիշխան կամքով ու փառքով զարդարեցիր եւ իբրեւ պսակում՝ երանական դրախտին ուրախ վայելքը պարգեւեցիր անոր, որպէսզի մշակէ ու պահէ զայն, անանց ու անպատմելի այդ պարգեւներով մշտնջենատր դառնայ**» շարունակելով իր աղօթքը, կը խօսի մարդուն մեղանշական կեանքին մասին եւ կը մատնանշէ Աստուծոյ հայրական սիրոյ արտայայտութիւնը. «**Հայրական սէրը ու զորովոյ ցոյց տուիր, գթացիր մարդոց եւ ելար կորսուածը փնտռելու: Այո, զայն փնտռելու դրկեցիր էակից Միածինդ, Քեզմէ ծնած եւ Քեզմէ անբաժանելի Աստուածորդին...**»: Հայրապետը շարունակելով իր աղօթքը կը փառաբանէ մեղաւոր մարդուն համար, Աստուծոյ պատրաստած փրկագործութեան ծրագիրը, որ իր լրումին հասաւ Աստուածորդիին Սուրբ Խաչելութեամբ եւ Հրաշափառ Սուրբ Յարութեամբ: «**Արդ, Միածինիդ մարմնին անմահութեան հանցը տուր մեզի, որպէսզի անով ապրինք, եւ սուրբ բաժակին անոյշ գինիէն խմցուր մեզի, որպէսզի միշտ խմելով՝ անվախճան ուրախութեամբդ ուրախանանք...**»:

Երեկոյեան՝ Ոտնուայի կարգն է, որ յիշատակութիւնն է Յիսուս Քրիստոսի կատարած ոտնուային (Յի 13: 1-20): Քրիստոս՝ մեծ Վարդապետը խնարհութեան իբրեւ խորհրդանիշ լուաց իր աշակերտներուն ոտքերը, որպէսզի մաքրուին: Մաքրութեան ու Սրբութեան խորհրդանիշ է ջուրով լուացումը:

Գիշերը՝ հաւարման արարողութիւնն է, որուն ընթացքին Հայ Եկեղեցին կը յիշատակէ Յիսուսի Մատնութիւնն ու Չարչարանքները: Հայ Եկեղեցոյ արարողակարգի ամենէն խորհրդաւոր արարողութիւններէն մէկն է: Արարողութեան շարականները, երգերը, աւետարանները կը պատմեն Աստուածորդիին Մատնութիւնը, ձերբակալութիւնը, հարցաքննութիւնը ատենախնի մէջ եւ անմեղին կրած չարչարանքները մեղաւորներու ձեռքերէն: «**Արձակողին անկապելի ձեռքերը կամովին կապուած, Կայափայի եւ Աննայի ապարանքը կը տանէին. Ծառան կ'ապտակէր այն երեսը, որմէ սերովբէն թեւերով կը ծածկուէր. պիղծ բերով թուք կ'արձակէր Անոր, որ իր թուքով կոյրին լոյս շնորհեց**» Սուրբ Ներսէս Շնորհալիի երգն է, որուն մէջ կը պատմէ Քրիստոսի երկուտր առաքելութեան պատմութիւնը: Աւետարաններու փոխանցած պատգամն ալ այս է, Տիրոջ Մատնութիւնն ու ձերբակալութիւնը, Պետրոս Առաքեալի ուրացումը եւ Քրիստոսի խօսքին կատարումը, Քրիստոսի հարցաքննութիւնն ու Անոր կրած չարչարանները: Այս է խորհուրդը Աագ Հինգշաբթիին:

Աագ Ուրբաթ առաւօտեան Խաչելութեան կարգը կը կատարուի, իսկ երեկոյեան՝ Թաղման կարգի Նախատօնակն է: Նախատօնակի շարականը կը պատմէ, թէ ինչպէս. «**Ամէնուն պարգեւ տուողը այսօր Պիղատոսէն պարգեւ իր խնդրուի**» եւ «**լոյսը որպէս թիկնոց հագնողը՝ կը յօժարի Յովսէփին ձեռքով պատանքուի**»: Անմահ Աստուածորդին, որ մեռելները յարուցանեց, Ինք Ամենակալ Հօր կամքը կատարելու համար նորափոր գերեզմանին մէջ ամփոփուեցաւ:

Աագ Շաբաթը կը կոչուի նաեւ Սուրբ Յարութեան Ծրագալոյց: Ծրագալոյցի Պատարագէն առաջ կը կարդացուին Մարգարէական գիրքերէն քաղուած Քրիստոսի Յարութեան պատրաստող բոլոր բաժինները:

Կիրակի, Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Յարութեան յիշատակն է, որ կու գայ կնքելու Աստուածորդիին տնօրինական կեանքի առաքելութիւնը: Քրիստոս Իր Յարութեամբ լրացուց բոլոր մարգարէութիւնները, որոնք կը պատրաստէին Իրեայ ժողովուրդը, թէ պիտի գայ Փրկիչը: Փրկիչը եկաւ սրբեց մարդը, իր խաչելութեամբ մարդուն շնորհեց Աստուծոյ որդի կոչուելու կոչումը եւ իր Յարութեամբ յարութիւն տուաւ բոլոր անոնց, որոնք իրեն հաւատացին:

Այս է խորհուրդը Աագ Շաբթուան:

Քրիստոս Յարեալ Ի Մեռելոց.
Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի:

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԵՑ ՀԱՄԱՐ

«Հիմա միակ փափաքս է՝ ճանչնալ Քրիստոսը, անոր յարութեան զօրութիւնը, եւ անոր չարչարանքներուն մասնակից դառնալ՝ անոր մահուան օրինակը իմ վրաս առնելով, որպէսզի ես ալ արժանի ըլլամ մեռելներէն յարութիւն առնելու»: Փիլիպպեցիներուն 3:10-11

"I want to know Christ—yes, to know the power of his resurrection and participation in his sufferings, becoming like him in his death, and so, somehow, attaining to the resurrection from the dead." Philippians 3:10-11





ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ

ՔՐԻՍՏՈՍՈՎ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՄԱՐԴՈՒՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ՈՒ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

«Փոփոխությունն ու նորոգությունը, որ Քրիստոս կը կապարէ քրիստոնեայ մարդուն մէջ, ինչպէս նաեւ Քրիստոս ինք է, որ կը բժշկէ հոգիին հիանդություններն ու ցանրը»:

ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Ով որ Աստուծոյ կու գայ եւ իրապէս կը ցանկայ Քրիստոսի ընկերակցութիւնը, անհրաժեշտ է, որ հետեւեալ նպատակադրումով անոր մօտենայ. Անպայման փոխուի իր նախկին վիճակէն, հրաժարի անցեալի վարուելակերպէն եւ դառնայ նոր ու բարի արարած մը եւ որեւէ կերպով երբեք չկառչի անցեալի հին մարդուն: Որովհետեւ առաքեալը կ'ըսէ. «Ոեւ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է» (Բ. Կր 5:17): Նոյն այս նպատակին համար էր, որ մեր Տէր Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ՝ փոխելու համար մարդկային բնութիւնը եւ նորոգելու գայն, եւ նոր ստեղծագործութեամբ մը ստեղծէ հոգին, որ պատուիրանազանցութեան պատճառով ցանկութիւններով ապականած էր:

Քրիստոս մարդացաւ, աշխարհ եկաւ, որպէսզի իր աստուածային Հոգիին միացնէ մարդկային բնութիւնը: Ան եկաւ, որպէսզի նոր եւ հոգեւոր միտք, հոգի, ականջներ, աստիճաններ, աստիճաններ, մէկ խօսքով՝ ամբողջապէս նոր մարդը ստեղծէ: Ահաւասիկ այն է այն ինչ որ եկաւ ընելու Քրիստոս բոլոր անոնց մէջ, որոնք իրեն կը հաւատան: Չանոնք իր աստուածային լոյսով սրբելով՝ նոր անօթներու վերածեց, որպէսզի անոնց մէջ լեցնէ նոր գինին, որ իր Հոգին է, ինչպէս ինք կ'ըսէ. «Նոր գինին նոր տիկերու մէջ կը դնենք» (Մտ 9:17):

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԴԸ ԲԺՇԿԵԼՈՒ ԵՒ ՓՈԽԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Այնպէս՝ ինչպէս երբ թշնամին իր իշխանութեան ենթարկեց մարդը, գայն փոխեց իր սեփական հաշտոյն համար, անոր հագցուց պիղծ ցանկութիւններու զգեստը, մեղքին հոգիով սրբեց եւ անոր մէջ լեցուց յանցանքի ու չար ուսուցումներու գինին, նոյնպէս ալ Տէրը՝ Քրիստոս, երբ փրկեց մարդը եւ ազատեց գայն թշնամիէն, նորոգեց գայն, իր Հոգիով օժեց եւ անոր մէջ լեցուց կեանքի գինին եւ նոր ուսուցումները, այսինքն՝ Սուրբ Հոգիին ուսուցումները: Որովհետեւ ան՝ որ հինգ նկանակին բնութիւնը փոխելով՝ հազարաւոր մարդոց համար բաւարար հացի վերածեց, եւ որ խօսիլ տուաւ անբան բնութիւն ունեցող իշուն, ան՝ որ պոռնիկը փոխեց առաքինի ու անարատ կերպարի, այրող կրակին բնութիւնը զովութեան վերածեց անոնց համար, որոնք բոցավառ հնոցին մէջ նետուած էին, ան՝ որ Դանիէլի սիրոյն պատառող առիծներուն բնութիւնը փոխեց, կրնայ փոխել նաեւ մեր վայրենիացած հոգին՝ գայն մեղքէն ու չարութենէն դէպի իր բարութիւնը, սրբութիւնը, սէրը, ողորմութիւնն ու խաղաղութիւնը առաջնորդելով: Եւ ատիկա ըրաւ. «Խոստացուած Սուրբ Հոգիով» (Եփ 1:13):

Այնպէս՝ ինչպէս հովիւը կրնայ բժշկել իր վիրաւորուած ոչխարը եւ գայն պաշտպանել գայլերու յարձակումներուն դիմաց, նոյնպէս ալ Քրիստոս՝ ճշմարիտ ու Բարի Հովիւը, երբ աշխարհ եկաւ, ինք միայն կրցաւ փոխել ու բժշկել կորսուած ու վիրաւոր ոչխարը, այսինքն՝ մեղքին խայթոցէն վիրաւորուած մարդը: Որովհետեւ քահանաները, Ղեւտացիներն ու Օրէնքի ուսուցիչները կենդանական զոհերու ընծայումով եւ անոնց արեան հեղումով անկարող էին բժշկելու մարդուն վիրաւորուած հոգին: Անոնք նոյնիսկ իրենց հոգիներն անգամ չկրցան բուժել, քանի որ տկարութիւններով շրջապատուած էին, ինչպէս որ Աստուածաշունչին մէջ գրուած է. «Որովհետեւ ցուկերու եւ նոխազներու արիւնը բնաւ չի կրնար մեղքերը ջնջել» (Եբր 10:4):

Մեծն Սուրբ Մակար

Ո՞Ր ԽՄԲԱԿԻՆ ԿԸ ՊԱՏԿԱՆԻՆՔ

Քրիստոս իր եռամեայ քարոզչութեան ընթացքին, գանազան հրաշքներ, բժշկութիւններ եւ օրհնութիւններ կատարեց, որոնցմէ յատկանշական է՝ Ղազարոսի յարութիւնը:

Անոր կատարած բոլոր հրաշքներուն, քարոզչութիւններուն, բժշկութիւններուն իրեն հետեւողներ ունէր: Եւ այդ հետեւողները ու անոնց կողքին նաեւ ուրիշներ, եկած էին Քրիստոսը փառաբանելու: Այդ մարդոց խմբակներուն մէջ կային Քրիստոսի կողմէ բժշկուածներ, մխիթարուածներ, բայց նաեւ հետաքրքիր մարդիկ, որոնք լսած էին Քրիստոսի մասին, սակայն չէին տեսած զինք: Կային նաեւ լրտեսներ, փարիսեցիներ եւ օրէնքի ուսուցիչներ, որոնք եկած էին Քրիստոսը մեղադրելու համար հնարք մը, առիթ մը գտնելու:

Քրիստոս առաջին անգամը չէր, որ մուտք կը գործէր Երուսաղէմ, սակայն վերջինն էր: Հրեաներու սովորութեան համաձայն Չատկուան գառնուկը, տօնէն հինգ օր առաջ պէտք էր իրենց տուններէն ներս բերած ըլլային, եւ այս իսկ պատճառով Քրիստոս, որպէս անմեղ գառնուկ, զոհուելու պատրաստակամութեամբ, եկած էր մուտք գործելու իր տունը՝ Երուսաղէմ. Չատկական տօնէն 5 օր առաջ:

Երուսաղէմի ժողովուրդը կ'ակնկալէր Քրիստոս ձիու վրայ նստած, իբրեւ արքայի, քանզի ինքն թագաւոր, սակայն Քրիստոս մուտք գործեց Երուսաղէմ, ասանակին վրայ նստած, իբրեւ բարեսիրտ, ողորմած եւ խաղաղարար թագաւոր:

Չիշտ է, որ Ծաղկազարդի այս պատկերը Քրիստոսի առաջին գալուստի ասարտը ցոյց կու տայ, սակայն միեւնոյն ժամանակ կը խորհրդանշէ նաեւ Քրիստոսի երկրորդ գալուստը, բայց այս անգամ ոչ իբրեւ խաղաղարարի, այլ իբրեւ դատարարի: Ծաղկազարդի այս օրով թէն մարդիկ ուրախ էին, սակայն տխուր էր Քրիստոս, որովհետեւ Ան գիտէր, թէ մարդոց այս բազմութենէն շատեր, որոնք «Ովսաննա, Ովսաննա» կը բարբառէին, մի քանի օր ետք խաչի ճանապարհին մահուան պիտի դատապարտէին: Տխուր էր, որովհետեւ իր հայրենիք Երուսաղէմը, գայն իր երկրէն պիտի վտարէր ու սպաննէր:

Սիրելի ընթերցող, Ծաղկազարդի տօնին առիթով, մեր Տէրը կու գայ մեզմէ իւրաքանչիւրին մէկ հարց տալու, թէ ի՞նչ խմբակին կը պատկանինք: Արդե՞ծք այն խմբակին, որ «Ովսաննա, Ովսաննա» կանչելով խաչ բարձրացուց իր Փրկիչը, թէ այն խմբակին, որ ձիոյ վրայէն եւ արմաւենիի ճիւղերը բռնած կը վկայէր Քրիստոսի յաղթանակն ու փրկագործութեան ծրագիրը: Արդե՞ծք մեր սրտերը ինչպիսի՞ հայրենիքի կը նմանին. իր գաւազը, բնակիչը դուրս վտարող, թէ այն հայրենիքին, որ իր բնակիչը կը դիմարտէ, կը յարգէ, կը պատուէ ու կը մեծարէ հանգստավայրի պէտք:

Ո՞ր խմբակին կը պատկանինք, միթէ այն լրտեսներու, խաբեբաներու, փարիսեցիներու խմբակին, որոնց համար Տիրոջ գալուստը վախ, ահ ու սարսափ կը պատճառէր ըսելով լուռ պահ է, հետեւողները պոռագին, թէ այդ անմեղ մանուկներու խմբակին, որոնք անկեղծ սիրով ու ջերմութեամբ հաւատարմութեամբ ու յոյսով լեցուած եկած էին գովերգելու, փառատրելու իրենց Տէրն ու Փրկիչը ըսելով. «Ովսաննա, Ովսաննա» բարձրելով: Օրհնեալ ըլլաւ դու, որ կու գաս Տիրոջ անունով. Ալլելուիա: Օրհնեալ ըլլաւ Քու թագաւորութիւնը այժմէն մինչեւ յաւիտեան: Ալլելուիա:

Նշան Քահանայ

ԿՐՆԱ՛Ս ԳՈՒՇԱԿԵԼ, ԹԷ Ո՞Վ ԵՄ ԵՄ:

Գրութիւնները գիծերով միացուցէք ճշգրիտ անձնաւորութեան:



Մարիամ Մագդաղենացի

Կու լայի, բայց յետոյ լսեցի Յիսուսը, որ զիս կը կանչէր եւ իմ դիմացս կանգնած էր:

Յիսուսի գերեզմանին պահակութիւնը կընէի: Երբ Հրեշտակը տեսայ, շատ վախցայ:

Յիսուս երեք անգամ հարցուց, եթէ զինք կը սիրէմ:

Կ'ուզ ըսի. «Մի՛ վախնար, Յիսուս մեռելներէն յարութիւն առաւ»:



Պետրոս Առաքեալ



Հռոմայեցի Ձիւնոր



Հրեշտակ



ՅՈՒԴԱՅԻ ՀԱՄԲՈՅՐԸ ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ

Անոր համբոյրը չունէր Սինի մը մեղմ շօշափը Որ հրձծումով մը՝ սիրոյն Կը շըընջէ սօսափը:

Անոր համբոյրը չունէր Բոյրի մը մեղկ այն թափը՝ Որ շուրթերու օրօրին Հետ կը խառնէ իր մրափը:

Անոր համբոյրը չունէր Խանդի մը խինդն ու ծափը, Որ սիրտերու տրոփումին Հետ կը թընդէ իր դափը:

Անոր համբոյրը չունէր Շողի մը բորբ շառափը, Որ բիբերէն կը թափէ Հալումներու տարափը:

Անոր համբոյրը փըջեց Խորշակի մը խարշափը, Փոթորկելով ոսկեփունջ Երազներու թօթափը:



Անոր համբոյրը լորձնեց Ժահրի մը տենդն ու լափը, Սուրբ երակէ սողկելով Սեւ խոկումի սարսափը:

Անոր համբոյրը կըրճտեց Հեռ ու նենգի կափկափը, Ու խարանի մրեց դրոշմով Ճակատի մը ջինջ սատափը:

Ո՛վ պիղծ համբոյր, որ գըրգըեց Ըստուերներու կըլափը... Լոյսին ընդհենք գըրկելով Մոլուցքի խեղդն ու խափը, Մշտագիշեր խարխափը:



Կրնա՞ս առաքեալներն ու իւրաքանչիւր կիները առաջնորդել դէպի Քրիստոսի գերեզմանը:





Ջարագովական 5

Ինչ է, Ո՞վ է, Ո՞ր է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Քրիստոնեության առաջին իսկ դարերն սկսեալ, Սուրբ Հոգույ ինքնությունը թերմբնումներու եւ խիստ բանավէճերու առիթ հանդիսացած է: «Հոգեմարտ» Մակեդոն, Դ. դարու եկեղեցայ առաջնորդներէն, նզովուեցաւ՝ իր հերետիկոսական այն տեսութեան համար, որով կ'որանար Սուրբ Հոգույ (յետայսու՝ «ՍՀ») աստուածութիւնը: Անոր Սուրբ Հոգույ աստուածաբանութիւնը հերքուեցաւ իր ժամանակակիցներէն՝ Ս. Աթանաս Աղեքսանդրացիին, Ս. Բարսեղ Կեսարացիին եւ այլոց կողմէ: Իսկ Նիկիոյ Տիեզերական առաջին ժողովը (325 թ.) հաստատեց եւ ամրագրեց ՍՀ աստուածութեան վարդապետութիւնը:

Հիմնական թիրմբնումը ՍՀ մասին այն է, թէ՛ ան կը կարծուի ըլլալ՝ անորոշ, խորհրդատր եւ ոչ-անձնաւորեալ զօրութիւն մը սոսկ. մինչդեռ, ըստ Սուրբ Գրային եւ Եկեղեցոյ հայրերու ուսուցման, ՍՀ Աստուած է, ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՆՁՆԱԽՈՐՈՒԹԻՒՆ է, Սուրբ Երրորդութեան երրորդ անձը, Հօր եւ Որդոյ հետ հաւասարապատիւ Աստուած: ՍՀ աստուածային ստորգծիները կը քաղենք Նոյնինքն Ս. Գիրքէն, ինչպէս օրինակ՝ «Ամէնուրէք» (Սաղմոս 139.7-8) եւ «Ամէնագէտ» (Ա. Կորնթացիս 2.10-11): ՍՀ կը կոչուի նաեւ՝ «Աստուծոյ Հոգին» (Հռոմայեցիս 8.16), «Քրիստոսի Հոգին» (Ա. Պետրոս 1.11), «Տիրոջ Հոգին» (Եսայի 11.2): Որպէս անձ, ՍՀ ունի միտք, զգացումներ եւ կամք: Ան կը մտածէ եւ մտքերը կը քննէ (Ա. Կորնթացիս 2.10), կը տրտմի (Եփեսացիս 4.30), կը բարեխօսէ (Հռոմայեցիս 8.26-27), որոշումներ կ'առնէ եւ գանազան կարողութիւններով կ'օժտէ (Ա. Կորնթացիս 12.7-11) եւ եօթնարկեայ պարզեմներով կը զարդարէ հաւատացեալները, իմաստութեան եւ հանճարի, խորհուրդի ու զօրութեան, գիտութեան եւ բարեպաշտութեան եւ աստուածավայտութեան շնորհներով (տես՝ Եսայի 11.1-2):

ՍՀ նաեւ հոգեւոր պտուղներ կ'աճեցնէ հաւատացեալներուն մէջ, ինչպէս՝ «սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, ազնուութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն:» (Գաղատացիս 5:22-23): ՍՀ կը բացայայտէ աշխարհի մեղքը, Քրիստոսի արդարութիւնը եւ չարին դատաստանը (տես՝ Յովհաննէս 16.8) եւ կը սորվեցնէ Քրիստոսի հետեւորդներուն եւ կ'ուղղէ գանոնք (Յովհաննէս 14.26): Անձի մը յատուկ նկարագրային այս կէտերը եւ գործունէութեան յատկանիշերը կու գան ըսելու, թէ՛ ճիշտ չէ հարցնել «Ինչ է ՍՀ», այլ պէտք է հարցնել՝ «Ո՞վ է ՍՀ»:

ՍՀ դերակատարութիւնը կը տեսնենք ստեղծագործութեան դրուագին մէջ. «Երկիրը անձեւ ու պարապ էր եւ անդունդներուն վրայ խաւար կար եւ Աստուծոյ Հոգին ջուրերուն վրայ կը շարժէր:» (Մեն 1.2):

Կը տեսնենք ՍՀ հեռացումը մարդէն. «Եւ Տէրը ըսաւ. 'Իմ Հոգիս միշտ մարդուն վրայ պիտի չմնայ, որովհետեւ անիկա մարմին [ապականեալ] է:» (Մեն 6.3):

Կը տեսնենք, նաեւ, ՍՀ վերադարձը մարդուն, Պենտէկոստէի (Հոգեգալստեան) օրը. «Բոլոր ներկաները ՍՀ լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:» (Գրծ 2.4): ՍՀ տուչութիւնը առաքեալներուն, Քրիստոսի Եկեղեցոյ սկզբնաւորումը կը հանդիսանայ:

Հայ Եկեղեցոյ Սկրտութեան խորհուրդի ընթացքին, նորամկրտեալ անձին համար կը յայտարարուի, թէ՛ ան դարձաւ «Տաճար Սուրբ Հոգույ», եւ այդպիսով՝ Աստուծոյ որդեգիր եւ Քրիստոսի ժառանգակից: Ահա թէ առաքեալը ինչպէս կը բացատրէ ասիկա. «Որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սրտերուն մէջ դրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած՝ Աբբա՛, այսինքն՝ Հայր՝ կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չեք, այլ՝ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգեք:» (Գաղատացիս 4.6-7):

Ամփոփելու համար. չէր կրնար Քրիստոսի Եկեղեցին գոյութիւն ունենալ՝ առանց ՍՀ: Քրիստոնէաներ պիտի չկարենային ծառայել Աստուծոյ՝ առանց նախապէս ՍՀ զօրութեամբ լեցուելու: Աւելին, ՍՀ է Քրիստոնէական հոգեկանութեան (spirituality) եւ աստուածային իմաստութեան բանալին: Պօղոս Առաքեալ հետեւեալ ձեւով կը նկարագրէ ՍՀ դերակատարութեան անհրաժեշտութիւնը մեր կեանքին մէջ. «Մարդոցմէ՛ ի՞նչ կրնայ մարդոս խորհուրդները ճանչնալ, եթէ ոչ՝ Նոյնինքն մարդոս հոգին որ իր մէջն է: Նոյնպէս ալ ո՛չ ոք կրնայ գիտնալ Աստուծոյ խորհուրդները, եթէ ոչ՝ Աստուծոյ Հոգին: Արդ, մենք այս աշխարհի հոգին չէր որ առինք, այլ՝ Աստուծմէ՛ դրկուած Հոգին, որպէսզի ճանչնանք Աստուծմէ՛ մեզի շնորհուած պարգեւները: [...] Աստուծոյ Հոգին չունեցող մարդը չ'ընդունիր Աստուծոյ Հոգիին բերած ճշմարտութիւնները, որովհետեւ անոնք յիմարութիւն կը թուին իրեն. եւ չի կրնար գանոնք ճանչնալ, որովհետեւ անոնք միայն Հոգիով կը քննուին:» (Ա. Կորնթացիս 2.11-12,14):

Աղօթքով խնդրէ Աստուծմէ՛, որպէսզի Սուրբ Հոգով լեցնէ քեզ եւ այդ իսկ պահէն պիտի սկսի քու հոգեւոր ճանապարհորդութիւնդ: Մակերեսային, սոժոյն, միապաղաղ կեանքը պիտի վերածուի խորիմաստ, գունեղ եւ հրաշալի. այսինքն՝ Քրիստոսանման կեանք, Քրիստոս քու ներսիդիդ ապրուած կեանք, հարազատ Քրիստոնէավայել կեանք:

Հայր Գեղարդ

Յ.Գ. մեզի ուղարկեցէք Աստուծոյ եւ ձեր հաւատքի ճանապարհորդութեան մասին ձեր ունեցած հարցումները:

Apologetics 5

WHAT, WHO, WHERE IS THE HOLY SPIRIT?

Since the early centuries of Christianity, the identity of the Holy Spirit has been misunderstood and strongly debatable. Macedonius, a 4th-century church leader, was anathematized for his heretical doctrine, rejecting the deity of the Holy Spirit (henceforth "HS"). His pneumatology (the theology of the Holy Spirit) was refuted by the great theologians of the early church, such as St. Athanasius of Alexandria and St. Basil of Caesarea, and the doctrine of the deity of the Holy Spirit was established and affirmed during the first Ecumenical Council of Nicaea (325 A.D.).

The main misconception is that the HS is some kind of vague, mysterious and impersonal power, whereas the biblical teaching and the teaching of the early Church is that the HS is God, a DIVINE PERSON, the third person of the Holy Trinity, equally divine with the Father and the Son. The divine attributes of the HS derive from the Holy Bible itself, such as omnipresent (Psalm 139.7-8) and omniscient (1 Corinthians 2:10-11). The HS is also known as "the Spirit of God" (Romans 8:16), "the Spirit of Christ" (1 Peter 1:11), and "the Spirit of the Lord" (Isaiah 11:2). As a person, the HS possesses a mind, emotions, and a will; the HS thinks and knows (1 Corinthians 2:10), can be grieved (Ephesians 4:30), intercedes for us (Romans 8:26-27), makes decisions and empowers the believers for ministry (1 Corinthians 12:7-11), decorates the believers with the seven-fold gifts of wisdom, understanding, counsel, fortitude, knowledge, piety, and fear of the Lord (Isaiah 11:2-3). The HS grows beautiful fruits of "love, joy, peace, patience, kindness, goodness, faithfulness, gentleness, self-control" (Galatians 5:22-23) in the hearts of the believers. The HS "will convict the world of its sin, and of God's righteousness, and of the coming judgement" (John 16:8) and will instruct and teach the followers of Christ (John 14:26). All these characteristics and activities of personhood exclude the "What?" question; we don't ask "WHAT is the HS?", the correct question would be, "WHO is the HS?"

We see the role of the HS in the creation narrative: "The earth was formless and empty, and darkness covered the deep waters. And the Spirit of God was hovering over the surface of the waters." (Genesis 1:2).

We see the deprivation of humanity of the HS: "My Spirit will not remain in humans forever, for they are corrupt." (Gen 6:3).

We also see the return of the HS during the day of the Pentecost: "They were all filled with the Holy Spirit and began to speak in other tongues as the Spirit enabled them." (Acts 2:4). The bestowal of the HS to the disciples became the inauguration, the starting point of the Christian Church.

In the sacrament of the Baptism, according to the rituals of the Armenian Apostolic Church, the newly baptized person is pronounced as "the temple of the HS," and thus we are adopted by God and become heirs with Christ; "You are his sons, God sent the Spirit of his Son into our hearts, the Spirit who calls out, 'Abba, Father.' So, you are no longer a slave but God's child, and since you are his child, God has made you also an heir." (Galatians 4:6-7).

